№ 5 Յունվարի 15 (27) 1881 Յունվարի 15 (27) № 5

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաբաղարացիք գրում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ-ին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԿԸ հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ։ I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետոն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 բուբլ, կէս տարվան 6 բ., հինգ ամս. 5 բ., չորս ամս. 4 բ., երեք ամս. 3. բ. երկու ամս. 2 բ. և մի ամս. 1 բուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց խնդիր։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ախալցխայից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «Голосъ» լրագրի թղթակցութիւնը։ Թիւրքիա։—«Մշակի» հեռագիրներ։— Յայտարարութիւններ։ — Բանասիրական։ Դաւիթ բէկ։

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

—

Երբ մի քանի ամիս սրանից առաջ Պետերբուրգ-Գրենվիչի անգլիական մինիստրութիւնը նորից յարուցեց երեք խնդիրներ միասին, այն է՝ Զերնոգօրիայի, Յունաստանի և Հայաստանի խնդիրները, ամենքը հաւատացած էին որ այդ խնդիրները միաժամանակ պէտք է վճռվեն։

Բայց այդպէս չեղաւ։ Զերնոգօրիայի խնդիրը, թէև մեծ դժուարութիւններով, վճռվեցաւ, բայց յունաց սահմանների խնդիրը և Թիւրքաց Հայաստանի մէջ բէֆօրմներ մտցնելու հարցը մնացին անվճիռ։

Մի կողմից Յունաստանի սահմանները որոշելու համար եւրոպական մի քանի պետութիւններ առաջարկում են այժմ միջնորդ դատարան ընտրել, միւս կողմից ինքն Յունաստանը անընդհատ զինաւորվում է և պատրաստվում է, եթէ հարկը պահանջի, պաշտպանել իր իրաւունքները զէնքի օգնութեամբ։ Ընկասած յունաց խնդիրը հերթի վրա է, բայց յունաց խնդրից յետոյ, տարակոյս չը կայ, հերթական խնդիրը լինելու է հայոց խնդիրը։

Դեռ պատերազմը վերջանալուն պէս Ռուսաստանը Սան-Ստէֆանօի դաշնագրով պահանջեց Թիւրքիայից մտցնել վերանորոգութիւնները հայերով բնակված երկիրներում և ապահովացնել քրիստոնեայ ազգաբնակութիւնը քիւրդերի և չերքէզների դէմ։ Նոյնը պահանջեց և Բերլինի դաշնագիրը, աւելացնելով որ Թիւրքիան անյապաղ պէտք է մտցնի այդ վերանորոգութիւնները և պարբերական կերպով հաշիւ տայ այդ բէֆօրմների իրագործման մասին Եւրոպային, որ իր համար իրաւունք էր պահել վերահսկել Հայաստանում մտցնվելու բարենորոգումների իրագործման վրա։

Բայց տարիներ անցան տարիների ետեւից,— և Թիւրքիան մինչև այժմ ոչինչ չը կատարեց, ոչ մի վերանորոգութիւն չիրագործեց։ Իսկ բարբարոսութիւնները Թիւրքաց Հայաստանում, ինչպէս, հաղորդում են թէ մեզ և թէ ռուսաց „Голосъ" լրագրին, շարունակվում են։ Հայերի դրութիւնը աւելի և աւելի անտանելի է դառնում։

Մենք ասեցինք որ անտարակոյս հայոց խնդիրը յունաց խնդրից յետոյ հերթական հարց կը լինի։ Բայց ե՞րբ կը լինի դա, մի քանի ամսից, կամ մի քանի տարուց յետոյ,— այդ դժուար է նախագուշակել։

Իսկ մինչև այդ ժամանակ հայոց մամուլը չը պէտք է քընած լինի։ Նա պէտք է ամեն ջանք գործ դնի խղճմտաբար կերպով մշակելու այդ խնդիրը և նրա համար հաստատ հող պատրաստելու։

Այդ կը լինի և մեր պարտաւորութիւնը ներկայ 1881 թ-ի ընթացքում։ Մենք կը մշակենք այդ խնդիրը այլ և այլ յօդուածներով, բացատրելով թէ ինչ են

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

Թ.

Կէսօր էր արդէն։ Խանի վրանի առջևի հրապարակի վրա, դէպի աջ կողմը, կարգով շարված էին երկու հարիւր ղինված ձիաւորներ խանի հեծելախմբից, հրացանները պատրաստ ձեռներին բռնած։ Նրանց հանդէպ, դէպի վրանի ձախ կողմը, նոյնպէս կարգով շարված էին երկու հարիւր հայ ձիաւորներ, նոյնպէս հրացանները ձեռքներին պատրաստ բռնած։ Հայ և պարսիկ ձիաւորների մէջտեղը թողված էր փողոցի նման մի երկայն տարածութիւն, որտեղից պիտի անցնէր Թորոս իշխանը։ Այդ փողոցի ծայրից յայտնվեցաւ նա։ «Պալամ»... գոռացին բոլոր ձիաւորները մի քանի անգամ և օդը թնդաց բազմաթիւ ձայների որոտմունքից։ Իշխանը նստած էր մի գեղեցիկ, սպիտակ նժոյգի վրա, որի ամբողջ սապաղէնը զարդարած էր արծաթով։ Նա մի հրակայտիպ մարդ էր, այրական խրոխտ դէմքով և առիւծի հրացայտ աչքերով։ Նրա առջևից տարվում էին իշխանի բերած «փիշքէշները», որ պիտի ընծայէր խանին։ Նօթին հոգի մինը միւսի ետևից, ղէնների վրա դրած, տանում էին եօթն պղնձէ սինիներ, որ ծածկված էին քիրմանի թանգագին շալերով և իրանց մէջ կրում էին զանազան հազուագիւտ և ծանրագին իրեղէններ։ Նրանց ետևից, սանձերից բռնած, տանում էին երեք գեղեցիկ նժոյգներ, որոց թամբը, սանձը և բոլոր զարդայքը զարդարած էին արծաթով։ Նժոյգները նոյնպէս ծածկված էին քիրմանի շալերով։ Այդ «փիշքէշների» ետևից գալիս էր ինքը իշխանը, շրջապատած իր թիկնապահներով։ Բոլոր մահմետականները մի առանձին նախանձոտ կատաղութեամբ դիտում էին հայ իշխանի փառքը և մեծութիւնը։ Նրա կշտից քարշ էր ընկած երկայն, կեռ թուրը, որի երախակալը զարդարած էր թանգագին ակներով, իսկ գոտի մէջ խրած էին մի զոյգ ատրճանակներ, արծաթով պատած կոթերով։ Նա թէև քառասուն և հինգ տարեկան կը լիներ, բայց երիտասարդի բոլորովին թարմ դէմք ունէր, բաւական գեղեցիկ և կանոնաւոր գծագրութեամբ։ Կարճ կտրած մօրուքի և գլխի գանգրահեր մազերի մէջ դեռ ոչ մէկը չէր սպիտակել, չը նայելով, որ այդ մարդը իր կեանքում խիստ սակաւ բոպէներ ազատ էր մնացել մաշող վշտերից։

Երբ իշխանը մօտեցաւ խանի վրանին, տասն քայլ հեռաւորութեան վրա ձիուց ցած թռաւ, այդ ժամանակ խանը դուրս եկաւ վրանից, դիմաւորեց նրան, և ձեռքից բռնելով, բերեց չադրի այն մասը, որ յատկապէս պատրաստված էր պատուաւոր հիւրին ընդունելու համար։ Իշխանի թիկնապահները, որ թուով քսան և հինգ հոգի էին, բոլորը ամէնի և քաջ երիտասարդներ, ձեռքները իրանց սրերի վրա դրած, կանգնեցին վրանի մուտքի այն կողմում, որ կողմը նստած էր իրանց տէրը։ Նրանց հանդէպ կանգնած էին խանի ֆէդրաչները, և անընկերասէր կերպով նայում էին կոպիտ սինեցի հայերի երեսին։

—Բարով եկաք, հազար բարով, ձեր իւրաքանչիւր քայլը ինձ համար մեծ շնորհ եմ համարում, ասաց խանը իր երկրի քաղաքավարութեան սովորական ձևով։

—Ինձ բերեց ձեր սպասին, իբրև մի ուխտաւոր, ձեր շնորհալի դէմքի լույսը տեսնելու ցանկութիւնը։ Ես ինձ բաղդաւոր եմ համարում, որ վայելում եմ ձեր շնորհը և բարեսրտութիւնը, և յուսով եմ, որ միշտ անխախտ կը պահպանվեն մեր բարեկամական կապերը, որպէս եղել են միշտ։

Այսպէս երկար, երկու տարբեր և թշնամական ցեղերի պետերը, մինը միւսին յայտնի կերպով շողոքորթելով, թափում էին միմեանց առջև իրանց բարեկամական ջերմ զգացմունքը և սէրը։ Այդ միջոցին իշխանի ծառաները «փիշքէշները» ներս բերեցին։ Եօթն պղնձէ սինիներ շարվեցան խանի առջև։ Երբ նրանց վրայից վեր առեցին քիրմանի շալի ծածկոցները, խանի աչքերը կատարելապէս չլացան։ Այդ թանգագին իրեղէնները թէև մէկիք Վրթանէսի գանձի չափ չէին լինի, բայց դարձեալ մեծ հարստութիւն դիզված էր սինիների վրա։ Մէկի վրա կիսված էին ոսկի դրամներ, միւսի վրա՝ արծաթի դրամներ, երրորդի վրա՝ արծաթով զարդարած ընտիր զէնքեր՝ դաշոյն, ատրճանակ, զարաբինայ, վառօդի և գնդակի ամաններ և այլն. չորրորդի վրա՝ արծաթից շինված և ոսկէջրած անօթներ՝ թասեր, կուլաներ, ղեյլանի և չիրուխի գլուխներ և այլն. հինգերորդի վրա՝ գեղեցիկ չինէական ամաններ, վեցերորդի և եօթներորդի վրա՝ զանազան տեսակ նուրբ մետաքսեղէն և շալեղէն գործուածներ հարեմի կանանց հագուստի համար։

—Ի՞նչ նեղութիւն էք քաշել, խօսեց խանը այդ բոլորը տեսնելուց յետոյ,—դուք ինձ չափազանց ամաչցնում էք ձեր առատաձեռնութեամբ. ես, իրաւն ասեմ, չը գիտեմ, թէ ինչով կարող եմ դուրս գալ ձեր պարտաւորութիւնից։

—Այդ բոլորը ոչինչ նշանակութիւն չունի ձեր բարեսրտութեան առջև, պատասխանեց իշխանը ուրախ ժպտալով,—ես գերվիշի *) նման ձեզ համար մի հատիկ մեխակ եմ բերել և աւելի ոչինչ։

Այդ միջոցին կանգնեցրին վրանի առջև իշխանի բերած երեք ազնիւ նժոյգները իրանց գեղեցիկ ասպաղէնով։

—Փահ....փահ....փահ....մաշալլա....բացականչեց խանը հիացմունքով,—դրանք, երևի, ձեր սեպհական երամակիցն են, եթէ ոչ, Սիւնեաց ամբողջ նահանգում այս տեսակ ձիաներ չը կան։

—Այո, իմ սեպհական երամակիցն են, պատասխանեց իշխանը և հրամայեց ձիապաններին, որ շուռ տան նժոյգները, որպէս զի խանը տեսնէ նրանց ձախ ոտի ազդրի վրա իր դրոշմը, որ էր հայոց Թ տառը։

«Փիշքէշի» ձիան առաջներին չէն նայում, ասում է հասարակաց առածը, բայց խանը կամենում էր տեղեկանալ նժոյգների տոհմը, ծագումը, կարծես, փողը նաղդ էր տուել. և այդ աւելի վերդովեցնում էր իշխանին, թէև նա ամեն կերպով աշխատում էր ծածկել իր խռովութիւնը։

—Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ, ասաց խանը ծանրութեամբ,—ես վաղուց դիտէի, որ դուք շատ լաւ մարդ էք, իսկ այժմ ուրախ եմ, որ ես սխալված չեմ եղել իմ կարծիքի մէջ։

Այնուհետև նա հրամայեց իր ախոռապետին, որ նժոյգները տանել տայ և խառնել իր ձիաների երամակի հետ, իսկ սանդուխտարին (գանձապահին) հրամայեց, որ սինիների մէջ բերված ընծաները տանէ իր սանդուխանան (գանձարանը)։

Այդ միջոցին խանի գեղեցիկ հագնված մանկաւարիկները չինէական նախշուն գաւաթների մէջ մատուցին շարբէթ, պատրաստած Ռաշտ լիմանի ջրից, որի մէջ լողում էին սառուցի մանր կտորտանք։ Զովացուցիչ ըմպելին մի քանի անգամ արվեցաւ, ընդմիջվելով Շիրազի անուշանոտ

---

*) Մեխակը կամ կանաչ տերևը դերվիշների ամենամեծ ընծան է։

Թիւրքաց Հայերի պէտքերը, ինչքան թւով են քրիստոնեաները Հայաստանում մահմետականների հետ համեմատելով, ինչքան թւով են Հայերը Թիւրքաց Հայաստանում, — քրիստոնեայ լինեն նրանք թէ մահմետական, — համեմատելով Հայաստանցի այլ ցեղերի հետ, վերջապէս որոնք են այն սահմանները Հայաստանում, ուր պէտք է Սան-Ստեփանոյի և Բերլինի դաշնագիրների զօրութեամբ մրցընվեն պահանջած վերանորոգութիւնները:

Այն անթիւ հարցերի մէջ, որոնցով պէտք է զբաղվի „Մշակը" ներկայ տարվայ ընթացքում, այդ կը լինի գլխաւոր հարցերից մինը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

Յունվարի 9

Երէկ, յունվարի 8-ին երեկոյեան մեր քաղաքի դումայի մէջ քաղաքագլխի ընտրութիւն էր: Երեսուն և չորս ներկայ եղող իրաւասուներից քսանը քուէ տուին նախկին քաղաքագլուխ պ. Գեղամեանցին, եօթը պ. Յովհաննէս Մութաֆեանցին, հինգը պ. Կոնստանտին Մեփիսովին, իսկ մնացեալ երկու քուէներից մի մի հատ ստացան երկու ուրիշ իրաւասուներ, որոնք և հրաժարվեցան ընտրողական քուէարկութիւնից: Ի զարմանս բոլոր ներկայ եղողների և իրաւասունների հրաժարվեցաւ և պ. Գեղամեանցը՝ առանց զիջանելու մեծամասնութեան խնդրանացը: Պարոնը բացայայտ ասաց թէ իւր հրաժարվելու պատճառը քաղաքագլխի ռոճկի պակասացնելն է, որը վճռել էր քաղաքային խորհուրդը իր նախընթաց նիստում և թէ ինքը, չը նայելով որ աղքատ անձն է, կարող էր իր ամբողջ տարեկան ռոճկի կէսը նուիրել դումայի դանձին, բայց ոչ երբէք տանել այն անպատուութիւնը, որով բարեհաճել էին իրաւասուք պատուել նորընտիր քաղաքագլխին:—Եղան առաջարկողներ վերաքննել դումայի նախահաշիւը և ուղղել այն սխալը, որով Կռիլովի «тришкинъ кафтанъ»-ի պէս դուման կարկատաններ էր ուզում ձգել քաղաքային պարտքերի պատառուած քների վրա, պակասացնելով որ և է 500 ռուբլի չնչին գումար քաղաքագլխի ռոճկից, առանց հաշուելու՝ թէ դորանով զրկվում է ընտրելագոյն և արժանաւոր քաղաքագլխից: Իսկ թէ պարոն Գեղամեանցը արժանաւոր է քաղաքագլխութեան՝ այդ ապացուցանում են մեծամասնութեան 20 քուէն:

Քուէարկվեցան վերջապէս պ. Յ. Մութաֆեանցը և պ. Մեփիսովը, որոնցից ստացան 18 ձերմակ և 15 սև առաջինը, 23 սև և 10 ձերմակ վերջինը: Ուրեմն սևացաւ պ. Մեփիսովը և ընտրվեցաւ պ. Մութաֆեանը երկու քուէով, որովհետև եթէ միայն 16 ձերմակ ստանար կը սևանար: Ըստ օրէնքի թելադրութեան քաղաքագլխի ընտրութիւնը պէտք է լինէր փոխանորդ քաղաքագլխի —անդամի ընտրութեան հետ միասին, որ և չեղաւ, թերևս այդ մասին դանդաղողներ լինեն նահանգապետին:

Նորընտիր քաղաքագլուխ պ. Յ. Մութաֆեանը երիտասարդ է և անծանօթ հասարակութեանը. ասում Ատուած, որ լաւ եօլայ գնայ մեր աղքատ, բայց ինքնաճանաչ հասարակութեանը հետ, որի մէջ էր կայանում նախկին քաղաքագլխի բոլոր արժանաւորութիւնները: Գեղամեանցը ճանաչում է և լաւ է ճանաչում ժողովրդին: Նոր քաղաքագլուխը կը հասկանայ անշուշտ, որ քաղաքագլուխը հասարակութեան և ոչ թէ մի քանի ազնների համար է, թէև այդ վերջինների քուէով ընտրված լինի ինքը: Ցանկանում ենք կատարեալ յաջողութիւն:

Լաւ է, որ վիճակաւորի ընտրութիւնն էլ չէ նորոգվում մի քանի տարին անդամ, ապա թէ ոչ մեր քաղաքի սրբազանը այս տարի առանց այլ և այլութեան կը սևանար: Ատուած յաջողութիւն տայ սրբազանի էլ Աբասթումանի մէջ արած փառաւոր չինութիւններին, թէև ինքը մեր ուսումնարանների չէմքից ոտքը ներս չէ դնում ամենևին և այնպէս է նայում ուսումնարաններին, ինչպէս մոլեռանդ պարսիկը խոզի մսին:

Ցոյս կայ, որ շուտով մի պարահանդէս տրուի Ախալցխայում յօգուտ Վանի սովատանջների:

Ախալցխայում կարծես աշունք լինի, անձրև է գալիս և ջրերը վազում են փողոցներով: Կարապետեան ուսումնարանի հնացած չինութիւնը շատ տեղերից կաթում է, ուսուցիչները լրիւ չեն ստանում իրենց ռոճիկը, մինչդեռ ուսումնարանի ահագին եկամուտները կորչում են չը գիտեմ Թիֆլիսի կոնսիստորիայի, թէ Էջմիածնայ անյատակ հորում: Մի զառամեալ աղա, պատուելի սրբազանը, մի քանի դերձակներ և արտաքսված ուսուցիչները կամենում են աճուրդով վերցնել բոլոր ուսումնարանների կառավարելը և արդէն ներկայացրել են վեհափառին նախահաշիւ, փոքր ծախսերով: Ամսական 5, 10, 15 և 20 ռուբլիանոց ուսուցիչներ են կամենում ձեռք բերել:

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուսաստանի փոստը դարձեալ չէ ստացվել: Մնում ենք կորված լուսաւորված աշխարհից:

—

Այսօր, յունվարի 15-ին լինելու է Արծրունու թատրոնում մի կոնցերտ բարեգործական նպատակով, որին մասնակցելու են Թիֆլիսի ռուսաց օպերայի գրեթէ բոլոր երգչուհիները և երգիչները:

—

Վրաց թատրոնը առաջ է գնում աջող կերպով և շարունակում է իր ներկայացումները Արծրունու թատրոնում: Նորերումս վրաց խումբը տուեց տիկին Սափարովի բենեֆիսին «Ժօսէֆ» պիէսան, թարգմանութիւն Ֆրանսերէնից: Թատրոնը լի էր: Տիկին Սափարովա և պ. Կիպիանի անունն էին իրանց դերերում:

—

Մի պարոն Յ. Ն. խնդրում է մեզ յայտնել հետևեալը: «Պատիւ ունեմ յայտնելու հայ հասարակութեանը, որ ես արդէն ձեռնարկել եմ թարգմանել հայերէն լեզուով Վիկտոր Հիւգոյի ողբերգութիւնը «Լուկրեցիա Բօրջիա»:

—

ԶԱՔԱԹԱԼԻՑ մեզ գրում են թէ արդէն լրանում է երկու ամիս, որ Զաքաթալը ձիւնի երեսը չէ տեսնում, եղանակը այնպէս տաք է, որ կարծես գարնան օրեր լինեն: Դեռ մի ամիս սրանից առաջ դաշտերում մանիշակն էր երևացել:

—

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ որ այս տարի քաղաքային դէպուտատի և ձայնաւորների ընտրութիւնը բաւական աջողակ կերպով է կատարված: Ալէքսանդրապօլցիները մեծ յոյս ունեն նոր ընտրվածների արդիւնաւոր գործունէութեան վրա:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ГОЛОСЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

„Голосъ" լրագրին գրում են Մուշից անցեալ դեկտեմբերի 14-ից հետևեալը: Երեք տարուց աւելի է, որ ես գտնվում եմ Անատոլիայի մէջ և այդ ժամանակամիջոցի ընթացքում ես շատ անգամ այցելել եմ և երկար ժամանակներով մնացել եմ Էրզրումի, Մուշի, Վանի և Թիւրքաց Հայաստանի նշանաւոր այլ կէտերի մէջ: Գիտենալով, որ ռուս մամուլը հետաքրքրված է հայկական խնդրով և միջոց ունենալով ստուգել Թիւրքաց վարչութեան յարաբերութիւնը դէպի այդ խնդիրը, կաշխատեմ նկարագրել ձեզ, թէ մինչև որ աստիճան Թիւրքաց կառավարութիւնը արհամարհում է Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածը:

Ես ոչինչ չեմ ասի ամենքին յայտնի այն փաստի մասին, որ Բ. Դռնից Հայաստան ուղարկված վերանորոգութիւնների մասնաժողովները ոչ մի իրական գործ չը կատարեցին. այդ հանգամանքը վաղուց յայտնի է պաշտօնական և մասնաւոր աղբիւրներից: Աւելորդ եմ համարում խօսել Բեկեր-փաշայի վերանորոգական յանձնարարութիւնների մասին, որոնք ծիծաղելի հետևանքներ ունեցան: Մի խօսքով հրաժարվում եմ նկարագրել Թիւրքաց զանազան մասնաժողովների և բեկերների գործունէութիւնը, որոնք անկարող են որ և է օգնութիւն հասցնել այստեղի աղգաբնակութեանը և որոնք ուղարկվում են Հայաստան Բ. Դրան իսկական նպատակները քողարկելու համար (այդ նպատակները ներքևը կը մեկնվեն), ես կը հաղորդեմ փաստեր, որոնք որոշ նկարագրում են Թիւրքաց Հայերի անտանելի և ծանր դրութիւնը:

Անցեալ տարի Մուշի մէջ կալանաւորվեցաւ յայտնի քիւրդ-աւազակ Իբօ, որ մեղադրվում էր անհամար ծանր քրէական յանցանքների մէջ: Էրզրումի բանտը տեղափոխված և յետոյ աքսորանքին դատապարտված Իբօն փախաւ բանտից, հէնց որ այդ երկու մարդիկը, դարձեալ նրանց ջանքերը իզուր անցան: Բայց խանի տրամադրութեան անակնկալ փոփոխութիւնը առանց մի նշանաւոր պատճառի չէր լինելու, և այդ պատճառը գիտենալը աւելի հետաքրքրում էր Մէլիք Դաւիթին:

—Դու այն ասա, կաֆար, հարցրեց նա սպասաւորից,—դեռ Թորոս իշխանը չեկած, ով տեսնվեցաւ խանի հետ:

—Հարեմից մի կին եկաւ խանի վրանը, և նրա հետ առանձնացած դաղտնարանում, երկար խօսում էին, պատասխանեց սպասաւորը:—Ներսունի ներքինապետը, սատանայի նման կանգնած էր դաղտնարանի մուտքի մօտ և ոչ ոք համարձակութիւն չունէր մօտենալու, դրա համար ես ոչինչ լսել չը կարողացայ:

Մէլիք Դաւիթը հասկացաւ բոլորը, դա անիծված Սիւրին պիտի լինէր, որ այս անգամ ևս խոչնդոտ դրեց հօր ձեռնարկութեան առջև, որ այս անգամ ևս ոչնչացրեց նրա բոլոր յոյսերը: Կատաղութիւնը, վրէժխնդրութիւնը իր ամբողջ դժոխային վրդովմունքով լցրին թշուառ հօր սիրտը: Նա այնքան մեծ ակնկալութիւններ ունէր իր աղջկանից, նա հաւատացած էր, որ Սիւրին կը լինի մի լաւ միջնորդ, մի լաւ բարեխօս իր և խանի մէջ, և կաշխատէ կատարել հօր բոլոր ցանկութիւնները, իսկ այժմ հակառակն էր տեսնում: Խաբված յոյսը աւելի զայրացնում էր նրան: Նրան յայտնի էին բոլոր պատճառները, թէ ինչու Սիւրին այսպէս էր վարվում: Նա ծախեց իր աղջկան, վաճառեց նրան փառք և իշխանութիւն ստանալու համար: Նա խլեց նրան քրիստոնէական ընտանիքից և ձգեց մահմետական հարեմի ապականութեան մէջ և, որ ամենագլխաւորն է, նա զրկեց աղջկան իր սիրած ազամարդից... որը այժմ գտնվում էր մի և նոյն գերիների թւում... և որի շղթաները կամենում էին աւելի ծանրացնել, և եթէ հնար կը լինէր, նրա կեանքին մահ նիւթել...: Անդամ, անողորմ փառասէրը կարծում էր, թէ կարող կը լինի խեղդել բնութեան ձայնը իր սիրող դստեր մէջ, կարծում էր, թէ պարսկական փակված հարեմի խլութեան մէջ բոլորը կը մոռանայ նա, ինչ որ առաջ այնքան թանդագին, այնքան մօտ էր նրա սրտին: Նա չէր կարծում, թէ հայ ընտանիքի ստրկացած դստեր մէջ կարող է լինել այս ասիական կամքի և բնաւորութեան հաստատութիւն: Նա չէր մտածում, որ Սիւրիի այժմեան կեանքի պայմանները կարող էին նրան աւելի խելամուտ դարձնել և աւելի ջերմ կերպով բորբոքել նրա սրտում կորցրած տղամարդի սէրը:

Մէլիք Ֆրանգիւլի արծուի տեսութիւնից անյայտ չը մնաց իր գործակցի խռովութիւնը: Նա տեսաւ, թէ որպէս այդ սառնասիրտ և անագորոյն մարդը չփոթութեան մէջ ընկաւ, երբ լսեց սպասաւորի բերած համբաւը: Բայց ինքը չէր հաւատում, որ խանը փոխած լինի իր միտքը, նա աւելի հաւանական էր համարում, որ խանը կընդունէ Թորոսի բերած ընծաները, կը խոստանայ վերադարձնել գերիներին, իսկ յետոյ կը հրամայէ նրան բանտարկել, և կը պահանջէ նրանից Մէլիք Վրթանէսի գանձերը: Ի՞նչ կարող են անել իշխանի բերած երկու հարիւր ձիաւորները և քսան ու հինգ թիկնապահները, որոնց առջև կանգնած են նոյն թւով զինված պարսիկներ: Շատ-շատ հայերի և պարսիկների մէջ կռիւ կընկնի, մարդիկ կը սպանվեն, բայց դարձեալ Թորոսը կը մնայ խանի ձեռքում:

—Դու հաստատ գիտես, որ խանը հրամայեց գերիներին յանձնել Թորոսի մարդկանց ձեռքը, հարցրեց նա սպասաւորից, չը նայելով, որ նա արդէն հաղորդել էր այդ տեղեկութիւնը:

—Ինչպէս չը գիտեմ, պատասխանեց սպասաւորը գործագէտ մարդու եղանակով,—ես իմ ա-

---

թամբաքուից պատրաստված դէյլանով: Չը նայելով այն բոլոր չողոքորթական խօսքերին, չը նայելով այն բոլոր մեծարանքին, որ խանը ցոյց էր տալիս հայոց իշխանին, նա դարձեալ իրան խաբված էր համարում, ընդունելով իշխանի բերած ընծաները և զրկվելով Մէլիք Վրթանէսի գանձից: Այդ ինչ յիմարութիւն էր, որ նա ընդունեց իր կնոջ առաջարկութիւնը, մինթէ կնոջ խօսքին կարելի էր հաւատալ, մինթէ առաջին կինը չէր, որ խաբելով իր տղամարդին, զրկեց նրան դրախտի փառքից: Այսպէս էր մտածում նա և տարուբերվում էր զանազան չարանենգ խորհուրդների մէջ, բայց չը գիտէր ինչ կերպով յաղեցնել իր ագահութեան կրքերը:

Խանը այն տեսակ մարդիկներից չէր, որ չնորհակալ է լինում ստացածովը. այս պատճառով Թորոս իշխանի հարուստ ընծաները ոչ միայն չը բաւականացրին նրան, այլ ձգեցին խիստ խորին կասկածանքի մէջ,—արդեօք այդ մարդը, որ այսքան կարողացաւ տալ ինձ, ուրեմն որքան պէտք է պահած լինի իր համար: Նա տխուր էր, որ շատ ստացաւ, որովհետև այդ շատը ապացոյց էր ուրիշ շատերի, որ պէտք չէր թող տալ մի հայ մարդու մօտ:

Շերբէթի խմելուց յետոյ մանկլաւիկները ձեռք լուանալու ջուր բերեցին, և կամենում էին ճաշի սեղանը պատրաստել:

—Ես մի պատառ հաց անդամ բերանս դնել կարող չեմ, մինչև գերիներին բանտից դուրս եկած և իմ մարդիկներին յանձնված չը տեսնեմ, ասաց Թորոս իշխանը փոքր ինչ սառը կերպով:

—Ինչու՞ Էք չտապում, պատասխանեց նրան խանը ծիծաղելով,—դեռ ես ճաշ անուշ արէք, հանգստացէք, այնուհետև, երեկոյեան զովի ժամանակ, երբ գնալու կը լինէք, գերիներին ձեզ հետ կը տանէք:

Բայց պարսկական ճաշը. հնդկական անուշահոտութիւններով, իսկ յաճախ թոյներով համեմած ճաշը, Թորոս իշխանին շատ չէր գրաւում: Նա իսկապէս ախորժակ չունէր մի բան ուտելու, թէև ճանապարհից էր եկած, թէև ոչինչ չէր կերած: Գերիների վիճակը սաստիկ տանջում էր նրա առաքինի և սիրող սիրտը: Նա ցանկանում էր շուտով տեսնել նրանց, տեսնել, թէ որն է մեռել, և որը կենդանի մնացել: Բայց խանը չէր կամենում, որ իշխանը գերիներին նոյն ցաւալի դրութեան մէջ տեսնէ, որպէս պահել էր նրանց. այս պատճառով իր մանկլաւիկներից մէկի միջոցով ծածուկ պատուէր տուեց բանտապետին, որ նրանց դուրս բերէ բանտից, շղթաները արձակէ, և կեղտոտութեան մէջ ապականված այդ թշուառներին փոքր ինչ մաքրել տայ:

Այդ միջոցին երկու մէլիքների վրանը մտաւ խանի սպասաւորներից մէկը, որին կաշառել էին լրտեսելու, թէ ինչ վախճան կունենայ Թորոս իշխանի այցելութիւնը:

—Ի՞նչ լուր բերեցիր, հարցրեց նրանից մէլիք Ֆրանգիւլը:

Սպասաւորը պատմեց, թէ խանը սիրով ընդունեց իշխանին, և չնորհակալ եղաւ նրա բերած «փիշքէշների» համար, և հրամայեց բանտից դուրս բերել գերիներին և յանձնել իշխանի մարդիկներին:

Սպասաւորի իւրաքանչիւր խօսքը նետի նման ծակում էր երկու մէլիքների սրտերը: Նրանք դժուարանում էին հաւատալ, թէ խանը կարող էր այսպէս հեշտութեամբ իր միտքը փոխել, թէ նա այնքան կը յիմարանար, որ չէր հասկանայ իր սեպհական շահերը, և չէր կատարի այն բոլոր օգտաւէտ խորհուրդները, որ նրա հաւատարիմ սէլիքները հաղորդեցին նրան: Ուրեմն դարձեալ խորտակվեցաւ այն մեծ որոգայթը, որի մեքենայութեան վրա այնքան շատ աշխատել էին այդ երկու մարդիկը, դարձեալ նրանց ջանքերը իզուր անցան: Բայց խանի տրամադրութեան անակնկալ փոփոխութիւնը առանց մի նշանաւոր պատճառի չէր լինելու, և այդ պատճառը գիտենալը աւելի հետաքրքրում էր Մէլիք Դաւիթին:

—Դու այն ասա, կաֆար, հարցրեց նա սպասաւորից,—դեռ Թորոս իշխանը չեկած, ով տեսնվեցաւ խանի հետ:

—Հարեմից մի կին եկաւ խանի վրանը, և նրա հետ առանձնացած դաղտնարանում, երկար խօսում էին, պատասխանեց սպասաւորը:—Ներսունի ներքինապետը, սատանայի նման կանգնած էր դաղտնարանի մուտքի մօտ և ոչ ոք համարձակութիւն չունէր մօտենալու, դրա համար ես ոչինչ լսել չը կարողացայ:

Մէլիք Դաւիթը հասկացաւ բոլորը, դա անիծված Սիւրին պիտի լինէր, որ այս անդամ ևս խոչնդոտ դրեց հօր ձեռնարկութեան առջև, որ այս անդամ ևս ոչնչացրեց նրա բոլոր յոյսերը: Կատաղութիւնը, վրէժխնդրութիւնը իր ամբողջ դժոխային վրդովմունքով լցրին թշուառ հօր սիրտը: Նա այնքան մեծ ակնկալութիւններ ունէր իր աղջկանից, նա հաւատացած էր, որ Սիւրին կը լինի մի լաւ միջնորդ, մի լաւ բարեխօս իր և խանի մէջ, և կաշխատէ կատարել հօր բոլոր ցանկութիւնները, իսկ այժմ հակառակն էր տեսնում: Խաբված յոյսը աւելի զայրացնում էր նրան: Նրան յայտնի էին բոլոր պատճառները, թէ ինչու Սիւրին այսպէս էր վարվում: Նա ծախեց իր աղջկան, վաճառեց նրան փառք և իշխանութիւն ստանալու համար: Նա խլեց նրան քրիստոնէական ընտանիքից և ձգեց մահմետական հարեմի ապականութեան մէջ և, որ ամենագլխաւորն է, նա զրկեց աղջկան իր սիրած ազամարդից... որը այժմ գտնվում էր մի և նոյն գերիների թւում... և որի շղթաները կամենում

կ. Պոլսից ստացվեցաւ այդ դատավճռի կատարման հրամանը։ Ոչ ոք չէր մտածեց քննել, թէ ի՞նչպէս կատարվեցաւ այդ յանցաւորի փախուստը և արդեօք նա ուշնէ՞ր համախոհներ։ Այդպիսով յիշեալ աւազակը ապրում է Մուշի սանջակի մէջ, շարունակում է իր արհեստը և ոչ ոք նրան անհանգիստ չէ անում։ Տեղական նահանգապետը այդ աւազակին կալանաւորելու փոխարէն այստեղի նահանգական դատարանի նախագահի և պրոկուրորի միջնորդութեամբ նրա հետ բանակցութիւններ սկսեց։ Նրանք աւազակին տեսութիւն նշանակեցին Սուրբ Կարապետի երևելի վանքի մօտ։ Թէպէտ նահանգապետի պատգամաւորները համոզում էին Իբրին կամաւորապէս անձնատուր լինել իշխանութեանը, բայց նա մերժեց նրանց առաջարկութիւնը և վերջ դրեց վարչութեան հոգսերին նրան կալանաւորելու մասին։ Ազգաբնակութիւնը, տեսնելով վարչութեան վերոյիշեալ յարաբերութիւնը աւազակի հետ և այդ անվայել բանակցութիւնները, համոզված է, որ իշխանութիւնը խրախուսում է աւազակին, որովհետև վարչութիւնը այդ աւազակին հեշտութեամբ կարող էր կալանաւորել։ Նոյն վարչութիւնը ներողամտութեամբ նայում է Մահմեդ-Ալի և քիւրդ այլ աւազակների վրա, թէպէտ հայերը իրաւացի կերպով անդադար նրանց վրա գանգատվում են։ Այդ բաւական չէ։ Միրզա-բէկ քիւրդը, որ մեղադրված է քրէական շատ յանցանքների մէջ և այրել է նորք գիւղը, Կոյիտի կայմակամ է նշանակված։

Թիւրքաց վարչութեան այդ ընթացքին մանաւոր բնաւորութիւն չէ կարելի տալ, որովհետև նա ամբողջ Թիւրքաց Հայաստանի մէջ այդպէս է գործում։ Ամեն տեղ վարչութիւնը հովանաւորում է քիւրդերին, աշխատելով մի և նոյն ժամանակ ձնշել Անատոլիայի քրիստոնեայ տարրը։ Հային սպանում են, հայոց գիւղը այրում կամ կողոպտում են, իսկ Թիւրքաց իշխանութիւնը անտարբերութեամբ է նայում այդ իրողութիւնների վրա, չը ցանկանալով կատարել իր պարտաւորութիւնը, գտնել մեղաւորներին և նրանց դատաստանին ենթարկել։ Բայց ինչպիսի ահագին աղմուկ է բարձրացնում քրիստոնեայի գործած փոքրիկ յանցանքը մահմեդականի դէմ։ Բազմաթիւ օրինակներից մէկը կը պատմեմ, որ նորերումս պատահեցաւ Ալվարինջ գիւղի մէջ, Մուշի մօտ, որ նկարագրում է Թիւրքերի Ֆանատիկոս վարմունքը հայերի հետ, նոյնպէս և այն միջոցները, որոնց գործադրում է տեղական վարչութիւնը քրիստոնեաների վերաբերութեամբ։

Հոկտեմբերի 25-ին, գիշերը թիւրք մայոր Հուսէյն-աղա իր ընտանիքով հասաւ Ալվարինջ գիւղը։ Այս օֆիցերի և նրա որդու շնորհիւ կռիւ պատահեցաւ նրանց և գիւղի մի քանի բնակիչների մէջ։ Երբ Հուսէյն-աղա ըէվոլվեր ձեռք առաւ, իսկ նրա որդին մերկացրեց իր դաշոյնը, գիւղացիները, փայտերով պաշտպանվելով, ծեծեցին յիշեալ օֆիցերներին։ Հէնց որ (կէս գիշերին) այդ լուրը հասաւ Մուշ, տեղական նահանգապետ, Մահմեդ-Ալի-փաշա, նահանգական դատարանի պրոկուրորի և 50 զապտիեների ուղեկցութեամբ, եկաւ Ալվարինջ։ Այստեղ յայտնի Ֆանատիկոս նահանգապետը հրամայում էր իր զօրքերին աւերել ամբողջ գիւղը։ Ամենատներելի, փողոցային բառերով յիշոցներ տալով, Մահմեդ-փաշան բղաւում էր. „սուրինահարեցէք, գետուրներին, որ նրանցից ոչ մէկը կենդանի չը մնայ“։ Դրանից յետոյ փաշան հրամայեց կալանաւորել 22 գիւղացիների, թէպէտ պրոկուրորը բողոքեց այդ կարգադրութեան դէմ և յայտնեց, որ կռուին միայն չորս գիւղացիներ են մասնակցել։ Այսպիսով նահանգապետից ոգևորված սուվարիները և զապտիեները ամբողջ գիշեր անկարգութիւններ էին անում Ալվարինջի մէջ։

Դրա հետևանքները շատ տխուր էին. մի ջահել կին, ծեծվելուց յետոյ, վիժեց երեխայի, մի ուրիշ ջահել կին, որ բռնաբարված էր, մեռաւ այդ անցքից երկու շաբաթ յետոյ, նոյն իսկ իր մարդու գալու օրը, որ Թիֆլիս աշխատանքի էր գնացել։ Ալելորդ է ասել, որ Ալվարինջի բոլոր կանայք, տղամարդկերանց մասին չեմ էլ խօսում, սաստիկ ծեծվեցան և նրանցից շատերը բռնաբարվեցան։ Տղամարդկերանցից ամենից շատ ֆնասվեցաւ յիշեալ գիւղի ժամկոչը, որին բռնադատեցին նոյն զինուորները։ Այդ ժամկոչը մերձ ի մահ հիւանդ է։ Բացի այդ Մահմեդ-Ալի-փաշա իր ձեռքով անողորմաբար ծեծեց մի պառաւ կնոջ, որ ազաչում էր ազատել իր կալանաւորված որդուն։

Փաստերը իրանք ապացոյցներ են։ Բաշիբուզուկ-նահանգապետի վերև նկարագրված ապօրինի և բարբարոս վարմունքը բաւական լոյս է գցում Բ. Դրան նպատակի վրա՝ վերջնականապէս ոչնչացնել քրիստոնեաներին։ Թիւրքաց իշխանութեան բոլոր գործողութիւններից ակներև երևում է, թէ Բ. Դուռը ինչպիսի ֆանատիկոսութեամբ և յաջորդաբար կատարում է իր պրոգրամը վերև յիշված նպատակին հասնելու համար։

Ուրեմն ահա սրանք են հայերին խոստացած վերանորոգութիւնները, ահա սրանք են մեծ պետութիւնների պաշտպանութեան հետևանքները։ Նոյն իսկ հայկական խնդրի ծագման պատճառով զայրացած և վախենալով, որ այդ հարցը սրընթաց բնաւորութիւն չը ստանայ, Բ. Դուռը շտապում է ապացուցանել հայերին, որ նրանց կողմից Եւրոպային դիմելը նրանց համար շատ վտանգաւոր է։

ԹԻՒՐՔԻԱ

„Էյտերի ընկերութեանը“ հեռագրում են կ. Պոլսից դեկտեմբերի 28-ից։ Հիւսիսային Ալբանիայի մէջ անկարգութիւններ են տիրում, որովհետև զինուորագրութեանը ենթարկված անձինք չեն հաւաքվում հրաւէրի համեմատ։ Նոյնպէս են վարվում և պահեստի զօրքերը։ Ալբանցիները հրաժարեցին և փոխեցին Թիւրք աստիճանաւորներին Պրիզրենդի, Իսկուցի և Իպեկի մէջ։ Վանի բրիտանական փոխ-հիւպատոսը կ. Պոլսի անգլիական դեսպանին մի գեկուցում ուղարկեց, որից երևում է, թէ Հայաստանի մէջ նոր նահանգների կազմելը չափազանց վշտացրեց հայերին, մանաւանդ որ այդ նահանգները այնպէս են բաժանված, որ մեծամասնութիւնը մահմեդականներն են կազմում։ Զեկուցման մէջ ասված է, որ եւրոպական հսկողութիւնը անհրաժեշտ է Հայաստանի մէջ վերանորոգութիւններ մտցնելու համար։ Ալէկս-փաշան յետ առաւ իր հրաժարականը, որի ընդունելը օտար դեսպանները խորհուրդ չէին տալիս սուլթանին։ Մուֆիզ-փաշա հասաւ պարտական սահմանները մի յանձնարարութեամբ քիւրդերի առաջնորդ Չէյխ Իբրահիմի մօտ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունվարի։ Սիեվի գլխաւոր-նահանգապետ Ջերկով արձակված է պաշտօնից և նշանակված է Պետական խորհուրդի անդամ։ Նրա պաշտօնը յանձնված է Օդէսայի գլխաւոր-նահանգապետ Դրենտելնին։ Դրենտելնի տեղ նշանակված է Խարկովի գլխաւոր-նահանգապետ իշխան Դոնդուկով—Կորսակով։ Խարկովի գլխաւոր-նահանգապետ նշանակված է իշխան Սերվատոպոլկ Միրսկի։ Պետերբուրգի նահանգի գվարդիայի շտաբի հրամանատար իշխան Իմերետինսկու տեղ նշանակված է գեներալ Ֆոն-Բոգենբախ։ Միջին Պաղստանի զինուորական կառավարչի պաշտօնակատար իշխան Օրբելիանուն գեներալ-մայորի աստիճան է տուած։

ԼՈՆԴՈՆ, 13 յունվարի։ Պլադստոն հիւանդ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 25 կ., երկրորդ 93 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 65 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 220 ր. 75 կ., երկրորդ 219 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 91 ր. 87 կ., երկրորդ 91 ր. 87 կ., երրորդ 91 ր. 87 կ., ոսկի 7 ր. 78 կ։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25 պէնս, Ամստերդամի վրա 126⅓ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 213 մարկ, Գարիզի վրա 264 Ֆր. 25 սանտիմ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

կանչով լսեցի և իմ աչքով տեսայ, երբ բանտապետը խանից հրաման ստանալով, գնաց, բաց արեց բանտի դռները և պատուիրեց իր սպասաւորներին մաքրել գերիներին, որ իշխանը նրանց այնպէս կեղտոտ չը տեսնէ։

Սպասաւորը կրկին հեռացաւ, պատուէր ստանալով երկու մէլիքներից, եթէ մի նոր փոփոխութիւն կամ մի նոր դէպք կը պատահէ՝ շուտով իմացում տալ նրանց։

Սպասաւորի հեռանալուց յետոյ երկու մէլիքները, կայծակնահար եղած մարդու նման, երկար մնացին մի սոսկալի չփոթութեան մէջ։ Նրանցից ամեն մէկը խօսք չէր գտնում իր սրտի ցաւը և վրդովմունքը արտայայտելու։ Մէլիք Ֆրանգիւլը մինչև այսօր յոյս էր դրած մէլիք Դաւիթի խորամանկութեան և բազմատրձութեան վրա։ Նա հաւատացած էր, որ այդ բանսարկուն իր ազդեցութեան տէր դատեր միջնորդութեամբ ամեն ինչ կարդի կը դնէ։ Իսկ այժմ մի խուլ զգացմունք նրան համոզում էր, թէ Սիւրին խիստ անյնորհակալ գործիք է հօր ձեռքում, թէ հայրը այնքան ազդեցութիւն չունի նրա վրա, որքան ինքը աշխատում է ցոյց տալ, և վերջապէս Սիւրին հակառակ է գնում հօր ձեռնարկութիւններին։ Այդ կարծիքների մէջ աւելի համոզվեցաւ նա սպասաւորի այն խօսքով, որով յայտնեց, թէ Թորոս իշխանի գալուց առաջ, հարեմի կնիկներից մէկը վրանի գաղտնարանում տեսնվեցաւ խանի հետ։ Ո՞վ կարող էր լինել այդ կինը, եթէ ոչ Սիւրին։ և կնիկներից որին կարող էր հետաքրքրել գերիների վիճակը, եթէ ոչ նրան։

—Դուք չէք կարծում, որ այդ բոլոր գործերը փչացնողը ձեր աղջիկն է, հարցրեց նա մէլիք Դաւիթից։

Թշուառ հօր լեղուն կապվեցաւ, չը գիտէր, թէ ինչ պէտք էր պատասխանել. անակնկալ հարցը սարսափեցրեց նրան։

—Ես չեմ կարծում, պատասխանեց նա բոպէական մտայուզութիւնից յետոյ։

—Ապա ինչով էք բացատրում Սիւրիի խանի հետ տեսնվելը Թորոսի գալուց առաջ։

—Ես առաւօտեան ձեզ պատմեցի, թէ այս գիշեր հարեմի մէջ պատահել է մի անկարգութիւն, կնիկներից մէկը Սիւրիի քնած ժամանակ կտրել է տուել նրա ծամերը, երևի, այս աւիթով դիմել է նա խանին, յայտնելու իր գանգատը։

Թէև մէլիք Դաւիթի բացատրութիւնները հեռու չէին հաւանականութիւնից, այսուամենայնիւ, մէլիք Ֆրանգիւլի սրտում մնաց մի խուլ կասկած դատեր և հօր յարաբերութիւնների մասին, մանաւանդ երբ նա մտաբերից, որ առաւօտեան Սիւրին մերժել էր հօր այցելութիւնը, պատճառ բռնելով իր ակարութիւնը։ Հարազատ հօրից աւելի ում կարող էր ընդունել հիւանդ աղջիկը, որ մահմեդականների մէջ ոչ մի ազգական, ոչ մի բարեկամ չունէր։ Եւ ինչ հրաշքով այդ հիւանդը այնպէս շուտ առողջացաւ, որ ըստապեց բողոքել իր ծամերի կտրվելու մասին։ Այդ բոլորը մէլիք Ֆրանգիւլին թուում էին անլուծանելի հանելուկներ։

Բայց մէլիք Դաւիթի համար ամեն ինչ պարզ էր, թէև նա աշխատում էր խորամանկութեամբ ծածկել։ Նրան յայտնի էր իր դատեր սէրը Գենուազի Շահումեան իշխանների վերջին ժառանգի՝ Ստեփաննոսի հետ, որ այժմ գերիների թուումն էր գտնվում, որին սպանել տալու ամեն միջոցները անցան ապարդիւն...։ Նա գիտէր, որ Սիւրին այնքան խելք ու այնքան համարձակութիւն ունէր, որ կարող էր ցրել խանի հրապուրանքը Ստեփաննոսի հօր՝ մէլիք Վրթանէսի առասպելական գանձի մասին։ Եւ վերջապէս, նա բոլորովին բնական էր համարում, որ Սիւրին կաշխատէր յաջողեցնել գերիների ազատութիւնը, որպէս զի նրանց թուում ազատված լինի և իր սիրելին։—Այդ բոլորը ոչնչացնելու, այդ բոլորը խափանելու համար, և Թորոս իշխանին ձեռնունայն, ամօթալի վերադարձնելու համար՝ բաւական էր մի խօսք ասել խանին, —բաւական էր յայտնել նրան, թէ իր պաշտելի Սիւրին խաբում է, դաւաճանում է նրան, թէ նա սիրում է այն գերիներից մէկին, որոնց ազատութեան համար բարեխօսութիւն է անում, թէ նա վաղուց իր սիրտը տուած էր այդ պատանուն, որ կարող է մի ժամանակ ոչ միայն խլել նրա հարեմից կնիկներից ամենագեղեցիկին, այլ տիրանալ և այն գաւառին, որ պատկանում էր նրա հօրը, որը նուաճելու համար խանը գործ դրեց այնքան շատ զոհողութիւններ։ Այդ բոլորը անաղարտ հայրը պատրաստ էր յայտնել խանին։ Նա պատրաստ էր մատնել հարազատ աղջկան։ Բայց ինչ կը լինէր դրա հետևանքը։—Հետևանքը, որպէս պարզ հայելու մէջ, տեսնում էր նենգաւորը. խանը, արդարև, գերիներին դարձեալ կը պահէր իրանց շղթաների մէջ և Թորոս իշխանին դարտակ ճանապարհ կը դնէր։ Խանը Ստեփաննոսին սպանել կը տար։ Խանը նրա սիրուհուն՝ Սիւրիին խեղդել կը տար կամ խայտառակութեամբ դուրս կը ձգէր իր հարեմից։ Այդ բոլորը անտարակոյս կանէր խանը։ Բայց ինչ կը շահէր մէլիք Դաւիթը, —ահա այդ հարցը տանջում էր նրան։ Սիւրիի անհաւատարմութիւնը պէտք է պատճառ դառնար նրա հօրը կորցնել իր բոլոր նշանակութիւնը խանի աչքում։ Եթէ այժմ թէ հայ և թէ մահմեդական հասարակութիւնների մէջ համարում և ազդեցութիւն ունէր նա, դրանցով պարտական էր իր աղջկանը, որ խանի առաջին կինն էր։ Բայց երբ Սիւրին այլ ևս չէր լինի, այնուհետև ով մարդու տեղ կը դնէր տաթեւացի ուրացողին։ Այժմ նրան թէև սրտով չէին յարգում, բայց նրանից վախենում էին, որովհետև խանի նման մի հզօր փեսայ ունէր։ Բայց երբ նրա բոլոր կապերը կը քանդվէին խանի հետ, այնօրից նա կընկներ, այն օրից նա կը կորցնէր բոլորը։ Թէև Սիւրին ոչ մի ժամանակ չէր օգնել նրա չար նպատակներին, թէև նա միշտ հակառակել էր հօր եղեռնական դիտաւորութիւններին, բայց այդ գիտէր հայրը միայն, դրսից այլապէս էին նայում գործերի վրա։ Դրսից այնպէս էին կարծում, թէ մէլիք Դաւիթը իր աղջկայ միջնորդութեամբ խանի խելքը, միտքը և սիրտը իր ձեռքումն ունի։ Ինչու չը շահվել միամիտների այդ երևութական կարծիքից։ Ինչու իր ձեռքով ոչնչացնել իր բախտը....

Խարէութեան սովորութիւնը զսպից չարագործին հարազատ աղջկան մատնելու ցանկութիւնից, ոչ թէ նրա կեանքը և պատիւը խնայելու մտքով, այլ իր կարծիքական բարեկամութիւնը խանի ընտանիքի հետ պահպանելու համար։

—Այդ պարսիկների խօսքերին ամենևին հաւատալ չէ կարելի, ասաց մէլիք Ֆրանգիւլը տրհամութեամբ, ընդհատելով իրանց մէջ տիրող լռութիւնը։

—Պարսիկները մեղաւոր չեն, պատասխանեց մէլիք Դաւիթը սառնութեամբ,—մեղաւորը մենք ենք, որ չը գիտենք իր ժամանակին ցանել, որ կարողանանք նոյնպէս իր ժամանակին պտուղ ստանալ։ Սուտ չէ ասած, թէ «հայի վերջին խելքն է գովելի», որովհետև գործի սկզբում նա խելք չունի։ Այսպէս էլ վարվեցանք մենք։ Թորոս իշխանը առաջուց իր պատուիրակների ձեռքով ամեն ինչ խօսում է, ամեն պայմաններ վերջացնում է խանի հետ, իսկ մենք յետոյ ենք իմանում, և յետոյ ենք աշխատում նրա արդէն եփած ապուրի մէջ սառն ջուր խառնել։ Այսպիսի յիմարութիւնները խիստ սակաւ անգամ են յաջողութիւն գտնում։

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պլանտատորներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականանում է փոքր շահով: Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաո և շօկոլադ-Ֆրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ըէվոլվերներ, կողպէքներ, մատուցարաններ, ամաններ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թամբեր, գուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակինտոշներ, կալենկոր, թուղթ, մատիաներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ: Արծրունու գալլերէում: 100—31

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ
Ր. ՇԱՀՎԵՐԴԵՍՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

(Գօլօվինսկի Պրոսպէկտի վրա, Աղէքսանդրեան այգու մօտ)

Բաժանորդագրվում են, թէ տեղական, թէ ռուսաց և թէ արտասահմանեան պարբերական բոլոր հրատարակութիւններին, նոյն իսկ խմբագրատանց յայտնած գներով: Օտար տեղերից թող բարեհաճեն դիմել հետևեալ հասցէով.

Въ Тифлисъ, въ газетное агентство В. Шавердова.

30—26

ԹԻՖԼԻՍԻ ՋԻԱՆԵՐԻ ՊՕՇԼԻՆԷՆ ՀԱՒԱՔՈՂ
ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԸ

Խոնարհաբար խնդրում են ձիատերերից մինչև 1-ն փետրվարի սոյն 1881 ամի հոգալ ձիաների պօշլինէն վճարելու և վերցնելու ապահովագիր, որով կը ստանան Թիֆլիսում ձի պահելու իրաւունքը սոյն 1881 թուում:

Այն անձինք, որոնք մեր խորհուրդը կատարած չեն լինի վերոյիշեալ ժամանակամիջոցում, կը վճարեն տուգանք պօշլինի չորրորդ մասը նաև այդպիսիներին կապալառուների գործակատարները կը բռնեն և կը ներկայացնեն քաղաքական կառավարութեանը հարկ եղած տնօրէնութեան համար:

Կապալառուների գրասենեակը Սաղում, պ. Միրզոեանի նոր շինութիւնումն է: Գրասենեակը բաց է առաւօտեան 8-ից մինչև 4 ժամը ճաշից յետոյ:

3—3

Մինչև այժմ չեղած **ԷԿԵՆԴԻ ԻՒՂ ՌԻՒՐԿ ՀԱՄԻԴՏԻ**, *որ կատարելագործված է բժիշկ* **ՄԱՎՐԻԿԻ ԴԻՑԶԻՑ**: *Առողջացնում է ամեն տեսակ* **ԽՈՒԼՈՒԹԻՒՆ**, *եթէ նա բնական չէ:* **ԵՐԵՔ ՌՈՒԲԼԻ** *բատանալուց յետոյ ուղարկվում է* **ՄԻ ՇԻՇ** *այդ իւղից, մանրաման* **ԽՐԱՏՆԵՐՈՎ** *գործածութեան մասին: Այդ իւղը կարելի է ստանալ* **Պետերբուրգի** *բոլոր* **ԴԵՂԱՏՈՒՆՆԵՐԻՑ** *և* **Աղէքսանդր ՎԷՆՑԵԼԻՑ**, *Կազանսկայա փողոց № 3:*

10—50

ՄԱՄԱՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Կուհիայումը, Սիմէօնովսկի փողոցի վրա, Հախվերդեանի տանը: Հիւանդներին ընդունում են ամեն օր՝ առաւօտեան ժամի 9—11. Նաւասարդեան—խիրուրգիական և վեներական (սիֆիլիտական) հ., Բուդկովսկի—կանանց և ներքին հ., ժամի 11—1. Լուսնկեվիչ—աչքերի, վեներական և կաշուի հ., Շահազիզեանց—ներքին հ. ժամի 5—7. Պավլովսկի—Զղային, հոգեկան և ներքին հ., Ռուշակով—երեխայոց հ., ծաղկահատուածիւն առաւօտեան ժամի 9—11. Շաբաթ օրերը երեկոյեան ժամի 7—8—ընդհանուր բժշկական խորհուրդ (консультація): Գիշերապահ բժիշկը երեկոյեան ժամի 9-ը մինչև առաւօտեան ժամի 7-ը: Ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ:

Վարձ՝ երթևեկ հիւանդներիցը ցերեկը—50 կ., գիշերը 1 ր.: Աղքատներին անվարձ բժշկական խորհուրդ և դեղ:

Հիւանդանոցումը բնակվում է բժիշկ Նաւասարդեանը:

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող: Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ.: **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ:

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխաչաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն: 1—100

Ըստ նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվեն. **ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի **ԿԱՅՍԱՈՒ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ** 2 ր. առանց թղթի: Անգլիական ըէվոլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆԱԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, ջենսօնի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, տուրնօրի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկսարակտ կակաո-շօկոլադի ծախելու համար, որոնք Վարիգի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան: **ՀՈՏԱՒԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.: Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբող ջ հագուստ 15 ր., կօնֆեկտներ հազի դէմ 60 կ. ֆունտը: 1—100

VICHY

Складъ въ ПАРИЖѢ,
22, бульваръ Монтмартръ.

PASTILLES DIGESTIVES, приготовленныя въ Виши изъ соли, добываемой изъ особенныхъ источниковъ, весьма пріятны на вкусъ и хорошо дѣйствуютъ противъ тошноты и труднаго пищеваренія.

SELS DE VICHY POUR BAINS. Одинъ свертокъ для ванны лицамъ, не могущимъ лечиться въ Виши.

Во избѣжаніе поддѣлки, требовать на всѣхъ марку.

Компаніи.

Թիֆլիսում Յուրինովի մօտ:

Մի երեսնամարդ, որ հասատ գիտէ հաշուել՝ ՀԱՇՈՒ-ԱՊԱՀՈՎԻՉԸ (Двойная итальянская бухгалтерія) կամենում է տեղ ունենալ կամաորդներում: Հասցէն թող տրվել Մշակի խմբագրատանը: 3—4

Ամենալաւ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ ծախվումեն ԲԻՍՕՎԵՐՆԵՐ, որոնցով մի անգամից կարելի է 20 ԱՒԱԶԱԿ ՍԳԱՆԵԼ, իւրաքանչիւր աւազակ 1 ր. 50 կ.: Մի և նոյն տեղը ամեն տեսակ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳԷՆՔ միւս տեղերից 30% էժան: Արծրունու գալէրէյ: 6—12

Ամբողջ հագուստ կամ պալտո 15 ր., ըէվոլվերներ 4 ր. և աւելի թանգ, կօնֆեկտներ հազի դէմ 60 կ. ֆունտը, խինայի գինի և փշի ջրմի դէմ 1 ր. 50 կ., խերես, պօրտվէյն 1 ր. 20 կ., կոնեակ շիշը 2 ր.: Բացի այդ Անգլիական խանութի մէջ ստացված է թէյ մեծ քանակութեամբ: 7—12

Թիֆլիսի **Միջի-Փողոցում** գտնվող **ՇԻՆՈՒԹԻՒՆԸ**, որ նորերումն վերանորոգվեցաւ և որ պատկանում է **ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ** հայոց վանքերին, ցանկացողներին **ԿԱՊԱԼՈՎ** է տրվում: Դիմել պ. **Կարապետ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ** գրասենեակը, Շադինովի քարվանսարայ: 3—5

Մամուլի տակն է, շուտով լոյս կը տեսնի և կուղարկուի իւր բաժանորդներին „Մատուոր. Ֆիզիկական և բարոյական ինքնակրթութիւն“ գիրքը. հեղ. Զօն Սաիւարտ Ըլէկկիի, թարգմ. Գրիգոր Շահբուդաղեանի: 3—3

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Հաւասարեցէք թէյի ֆունտը			1 ր. 5 կ.	Մօսկվայից բերվող թէյի հետ			Ֆ. 1 ր. 30 կ.
—	—	—	1 ր. 10 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 40 կ.
—	—	—	1 ր. 20 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 60 կ.
—	—	—	1 ր. 40 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 80 կ.
—	—	—	1 ր. 60 կ.	—	—	—	Ֆ. 2 ր. —
—	—	—	1 ր. 80 կ.	—	—	—	Ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 ր. —	—	—	—	Ֆ. 3 ր.

20—100

ԻՒԼԻՈՒՍ ԳՐԵՑԻ Վ ԿԱՅՍԱԿԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԻՋՈՑ (գեղ) **ՈՍԿՐԱՑԱՒԻ ԵՒ ՐԵՎՄԱՏԻԶՄԻ** դէմ: Ամենալաւ օգնող միջոց է, որ կարելի է հեշտութեամբ և առանց յաւելի գործ դնել ամեն տեսակ **ՈՍԿՐԱՑԱՒԻ ԵՒ ՐԵՎՄԱՏԻԶՄԻ** դէմ, մանաւանդ մատների և ջղերի յաւելի և մարմնի զանազան մասերի կծկիմանն դէմ, միակողմանի գլխացաւի (միգրէնի) դէմ, գլխի կծկիման դէմ և մինչև անդամ **ԿՐԿՆՎՈՂ ՋԵՐՄԻ** դէմ, սրտի ափերի և կրծքի բորբոքման դէմ, ըեվմատիզմի հետևանքների դէմ նոյնպէս և արտասահմանեան ջրերից լաւացողների համար: Վկայականի միակ տեղը Լուիս Գրից, Վիեննա, II Prater strasse № 49. Ծախվում է 4 ռուբլի գործածութեան խրատներով Ռուսաստանի բոլոր դեղատուների մէջ: Գլխաւոր պահեստը Մօսկվայի Ր. Կեօլեր և ընկ. խանութի մէջ, Նիկոլայայա փողոցի վրա: Փոստային ծախսի համար 40 կ. է ուղարկվում: 11—25 (3)

VICHY

Управленіе:
PARIS, 22, boulevard Montmartre.

GRANDE-GRILLE. Отъ лимфатическаго расположенія, дурнаго пищеваренія, засоренія печени и селезёнки, завала, каменной болѣзни и проч.

HOPITAL. Отъ труднаго пищеваренія, тяжести желудка, потери аппетита, боли въ желудкѣ.

CELESTINS. Отъ боли въ поясницѣ, мочеваго пузыря, каменной болѣзни, подагры, потери аппетита.

HAUTERIVE. Отъ боли въ поясницѣ, мочеваго пузыря, каменной болѣзни, подагры, потери аппетита.

ТРЕБОВАТЬ названіе источника на коробкѣ.

Թիֆլիսում Յուրինովի մօտ

Եանսի թիլեաթանամաղ Լիլի ու Ֆրանսիայի մեծագոյն դեղատան (գեղ) № 19, Մեծ Մարմարեայ փողոցում գտնվող դեղատունը հայտնում է թող տալիս Մշակի խմբագրատանը: 3—10

ԼՕՆԴՕՆԻ ԽԱՆՈՒԹ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՏԱԿ *բացված է ծախելու համար իսկական, լաւ* **ԹԷՅԵՐ** *և այլ* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ**, *օրինակ,* **ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, ԿՈՂՊԷՔՆԵՐ,** *ամաններ,* **ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ,** *դանակներ, գդալներ,* **ԹԷՅԱՄԱՆՆԵՐ,** *շօկոլադ,* **ԿԱԿԱՕ,** *հոտաւէտ ջրեր,* **ՍԱՊՕՆ,** *թաշկինակներ,* **ԳՈՒԼԲԱՆԵՐ,** *թուղթ, մատիաներ,* **ԳՐԻՉՆԵՐ,** *թամբեր, սուկրիա:* **Զրթաց լինող ՊԱԼՏՕՆՆԵՐ,** *մակ-ինտոշներ: Հավանայի իսկական* **ՍԻԳԱՐԱՆԵՐ** *և անգլիական կօնֆեկտներ:*

1—100

Дозволено цензурою, Тифлисъ, 14 Января 1881 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.